ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆ ԱՎԵԼԱՑԵԼ Է 10 ԼԱՐԻՈՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ինչ վերաբերում է կենսաթոշակների ընդհանուր գումարի ավելացմանը, ապա այն կազմում է տարեկան 30 միլիոն լարի եւ նախատեսված է երկրի բյուջեում»,- հայտարարեց Զազա Սոպրոմաձեն:

Նա նշեց, որ, միաժամանակ, պետությունը կենսաթոշակառուներին վերապահում է բժշկական ապահովագրության լավագույն փաթեթը: «Դրա արդյունքն այն է, որ վերջին ժամանակահատվածում կենսաթոշակառուների կյանքի տեւողությունն ավելացել է, ինչն իր արտահայտությունն է գտել կենսաթոշակառուների ավելացման մեջ: Հիշեցնեմ, որ վերջին մեկուկես տարվա ընթացքում, 687 հազարի փոխարեն, կենսաթոշակառուների թիվը կազմել է 703 հազար մարդ, այսինքն՝ նրանց թիվն ավելացել է 17 հազարով»,- ասաց Զազա Սոպրոմաձեն:

ՍԱՀՄԱՆՎԵԾ ԿԵՆՍԱԿԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԸ

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի վիճակագրության ազգային ծառայությունը, ընթացիկ տարվա օգոստոսի 1-ի դրությամբ, Վրաստանում աշխատունակ տղամարդու համար կենսական նվազագույնը կազմել է 155,6 լարի, միջին սպառողի համար՝ 137,8 լարի, միջին ընտանիքի համար՝ 261 լարի:

Ծառայության տեղեկատվությամբ, ընթացիկ տարվա հունիսին Վրաստանում արժեզրկումը կազմել է 0,02 տոկոս:

Նշենք, որ ծառայության տեղեկատվությամբ, ընթացիկ տարա սկզբին, աշխատունակ տղամարդու համար, ըստ վիճակագրական տվյալների, կենսական նվազագույնը կազմում էր 159,4 լարի, միջին սպառողի համար՝ 141,2 լարի, միջին ընտանիքի համար՝ 267,4 լարի:

ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳԻՆԸ ԱՎԵԼԱՑՎԵՑ



Վրաստանի էներգետիկայի եւ ջրամատակարարման կարգավորման ազգային հանձնաժողովը սեպտեմբերի 3-ին ընդունեց որոշում Թբիլիսիում էլեկտրաէներգիայի սակագինը 36 տոկոսով ավելացնելու վերաբերյալ:

Նշենք, որ սակագնի ավելացման պահանջով, հանձնաժողովին դիմել էր էլեկտրակարգավորման ԹԷԼԱՍ-ի ընկերությունը: Որպես պահանջի հիմնավորում, ընկերությունը ներկայացրել էր ազգային տարադրամի լարիի արժեզրկման փաստը:

ԹԷԼԱՍ-ի ընկերության աբոնենտների համար. ովքեր սպառում են մինչեւ 101 կիլովատ ժամ էլեկտրաէներգիա, սակագինը առանց հավելյալ արժեքի հարկի (ՀԱՀ) հասցվում է 12,980 թեթրիի, 101-ից մինչեւ 301 կիլովատ ժամ սպառողների համար՝ սակագինը հասցվում է 16,992 թեթրիի, իսկ առանց ՀԱՀ-ի հաշվառման, 301 կիլովատ ժամից ավելի սպառողների համար սակագինը հասցվում է 21,476 թեթրիի:

Ինչպես ասաց Վրաստանի էներգետիկայի փոխնախարար Մարիամ Վալիշվիլին, սակագնի ավելացման դեպքում, պետությունը կմարի բնակչության առանձին կատեգորիաների համար հավելավճարը:

ԴԱՎԻԹ ՍԵՐԳԵԵՆԿՈ. «ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՉ ՄԻ ՆԱԽԱԳԻԾ ՉԻ ԿՐՃԱՏՎԻ»

Վրաստանի կառավարության հերթական նիստի ավարտից հետո, առողջապահության նախարար Դավիթ Սերգեեենկոն հայտարարեց, որ առողջապահական եւ սոցիալական ոչ մի նախագծի կրճատում չի ծրագրվում:

Նրա խոսքերով, գործադիրն իր նիստում չի քննարկել բյուջեի հստակեցման հարցը: «Կարող եմ միանշանակորեն հաստատել, որ առողջապահական եւ սոցիալական ոչ մի նախագծի կրճատում չի ծրագրվում: Ամեն ինչ մնում է ուժի մեջ եւ կիրականացվի՝ ըստ մշակված ծրագրի: Այսօր բյուջեի հստակեցման մասին խոսք չի եղել»,- ընդգծեց նախարարը:

ԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ԸՆԴՀԱՏՎԱԾ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՎԵՐԱԿԱՆԳՆՎԻ

Ինչպես հայտարարեց Վրաստանի առողջապահության փոխնախարար Զազա Սոպրոմաձեն, այն միայնակ կենսաթոշակառուների օգնությունը, որի հանձնումը որոշակի ժամանակահատվածում դադարեցվել էր օգոստոսի 20-ից, վերականգնվել է:

Նրա խոսքերով, արդեն սկսվել է միայնակ կենսաթոշակառուներին նպաստների հանձնման վերականգնման այն գումարների հանձնումը, որոնք հաստատվել են Վրաստանի կառավարության կողմից ընդունած փոփոխություններից հետո: Փոխնախարարի խոսքերով, նախարարության կողմից մանրամասն ուսումնասիրվել է սոցիալապես անպաշտպան ընտանիքների իրավիճակը: «Սոցիալական սպասարկման գործակալությունը, ներկա դրությամբ, գրանցել է 1 միլիոն 600 հազար մարդ: Բնականաբար, պետությունը չի կարող բոլորին սոցիալական օգնություն ցուցաբերել, ուստի կկիրարկվեն օգնության հանձնման այլ միջոցներ»,- նշեց փոխնախարարը:

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆՊԱՇՏՊԱՆՆԵՐԻՆ ԿՏՐՎԵՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՎԱՈՒՉԵՐՆԵՐ

Թբիլիսիի սակրեբուլոյի նախագահ Գիորգի Ալիբեգաշվիլին, մեկնաբանելով կոմունալ վաուչերների հանձնման կապակցությամբ ընդդիմության քննադատությունը, հայտարարեց, որ այդ ուղղությամբ որոշակի անհարթություններ են նկատվել: «Առաջին հերթին, մենք պետք է օգնենք պարբերաբար կարիքի մեջ գտնվող քաղաքացիներին: Այն քաղաքացիների նկատմամբ, ովքեր ունեն որոշակի եկամուտ եւ կարողանում են բավարարել նվազագույն պահանջմունքները, բնականաբար, այլ մոտեցում է մշակվելու: Սոցիալապես ոչ մի անպաշտպան առանց վաուչերի չի մնա»,- հայտարարեց Ալիբեգաշվիլին: Նրա խոսքերով, ներկայումս հստակեցվում են ցուցակները, քանի որ շատերը, ովքեր սկզբունքորեն դրա կարիքը չունեին, ստանում էին սոցիալապես անպաշտպաններին վերապահվող վաուչերները:

ՎԻԶԱ

ԵՐԿՐՆԵՐ, ՈՒՐ ԿԱՐԵԼԻ Է ՄԵԿՆԵԼ ԱՌԱՆՑ ԱՅՑԵԳՐԻ

Վրաստանում շատերն են սպասում Եվրամիության հետ անայցեգրային պայմանակարգի հաստատմանը: Թեպետ, ներկա դրությամբ, Վրաստանի քաղաքացիները կարող են առանց այցեգրերի լինել շուրջ 12 երկրներում:

Վրաստանի քաղաքացու անձնագրով, առանց այցեգրի կարելի է մեկնել Հայաստան, Ադրբեջան, Թուրքիա, Ուկրաինա, Բելառուս, Մոլդովա, Իսրայել, Իրան, Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան եւ Ուզբեկստան:

Առանց այցեգրի գտնվելու ժամկետը չի սահմանափակվում Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Տաջիկստանում, Մոլդովայում, Ուզբեկստանում, Ուկրաինայում եւ Ղրղզստանում: Ղազախստանում եւ Թուրքիայում առանց այցեգրի գտնվելու ժամկետը առավելագույնս 90 օր է, Իրանում՝ 45 օր:

Ինչ վերաբերում է Իսրայելին, որտեղ Վրաստանի քաղաքացիների համար այցեգիրը հանվեց վերջին ժամանակներում, երկրի տարածքում գտնվելու առավելագույն ժամկետը 180 օրվա ժամանակահատվածում սահմանափակվում է 90 օրով:

Մի շարք երկրների սահմանագծում, Վրաստանի քաղաքացիները կարող են ստանալ երկիր այցելելու այցեգիր: Այդ երկրների թվում են՝ Եգիպտոսը, Շրի Լանկան, Լիբանանը, Հորդանանի Թագավորությունը, Ջամայկան, Նեպալը, Քուվեյթի Թագավորությունը, Մադագասկարը, Մալդիվների Հանրապետությունը, Տուվալուն, Հայիթին, Ջիբութին եւ այլն:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ ՆԱԽԱՏԵՍՈՒՄ Է ՏԵԽՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

2017 թվականի սկզբից բոլոր ավտոմեքենաների համար պարտադիր տեխնիկական ստուգման ներդնումը թույլ կտա բարելավել էկոլոգիական վիճակը:

Պարտադիր տեխստուգման վերականգնման որոշումը Վրաստանի խորհրդարանն ընդունել էր 2015 թվականի փետրվարին: Համաձայն օրենքում կատարվող փոփոխությունների, մինչեւ 2017 թվականի դեկտեմբերի 31-ը, պարտադիր տեխնիկական ստուգում են անցնելու բոլոր այն տրանսպորտային միջոցները, որոնք գործում են Վրաստանի տարածքում, օրենքի համաձայն գրանցված են: Պարտադիր տեխստուգման են ենթակա բեռնատար ավտոմեքենաները, որոնց բեռնատարողությունը կազմում է ավելի քան 3,5 տոննա եւ տրանսպորտային միջոցները, որոնք նախատեսված են ուղեւորափոխադրումների համար, ունեն 8-ից ավելի ուղեւոր փոխադրելու իրավունք: Օրենքի փոփոխությունների նպատակն է աստիճանաբար մոտեցնել ավտոմեքենաների տեխնիկական վիճակի որոշման թեստավորումը եվրոպական չափորոշիչներին՝ հաշվի առնելով երկրի տնտեսական եւ սոցիալական իրավիճակը:

Մարդատար ավտոմեքենաների համար տեխստուգման անցկացումը մինչեւ 2017 թվականի դեկտեմբերի 31-ը մնում է կամավոր:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Ժառանգությամբ տրված գույքի սեփականատերը դառնալու համար, անհրաժեշտ է նոտարից ստանալ ժառանգության վկայականը:

ՍԱՀՄԱՆՎԱԾ ՈՒՆԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ ՍԱՄՈՆՈՒՍՏՐՈ

Ժառանգության վկայական ստացման համար պետք է դիմեք Վրաստանի տարածքում գործող ցանկացած նոտարին՝ ժառանգատուի (գույքի սեփականատիրոջ) մահվան օրվանից վեց ամսվա ընթացքում, եւ ներկայացնեք դիմում ժառանգության ստացման վերաբերյալ:

Վեց ամիս անց, ներկայացված դիմումի հիման վրա ժառանգության վկայական կստանաք միայն ստորեւ ներկայացված հետեւյալ դեպքերում.

* Եթե գրանցված եք նույն բնակտարածքում, որտեղ ապրում էր ժառանգատուն:

* Եթե նոտարին ներկայացնեք ժառանգատուի տնային գույքը, նրան պատկանող տրանսպորտի միջոցով տեխանձնագիրը, նաեւ՝ մունիցիպալիտետի կողմից տրված տեղեկանքը գույքի սեփականության վերաբերյալ եւ կոմունալ հարկերի վճարման կտրոնը (հարկերը պետք է վճարված լինեն ժառանգատուի սեփականության ներքո գտնվող գույքի հասցեով՝ նրա մահվանից վեց ամսվա ընթացքում):

* Եթե ստացել եք մյուս ժառանգորդների համաձայնությունը, ժառանգության վկայականի ստացման հարցում դրա դիմումը ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետում, միայն թե մնացած ժառանգորդները վեց ամսվա ընթացքում անձամբ պետք է նոտարին ներկայացնեն իրենց դիմումները:

Մյուս դեպքերում, եթե վեց ամսվա ընթացքում նոտարին դիմում չի ներկայացվել, հարկ է դիմել դատարանին:

Դատարանը կարող է երկարաձգել ժառանգության ստացման համար սահմանված ժամկետը, եթե համարի, որ երկարաձգման պատճառները հարգելի են:

Ժառանգության վկայականը տրվում է վեց ամսվա ժամկետի ավարտից հետո:

Վեց ամսից շուտ ժառանգության վկայականը տրվում է այն դեպքում, եթե նոտարը տեղեկանք է գտնում այն մասին, որ, ձեզանից բացի, այլ ժառանգորդ գոյություն չունի: Միաժամանակ, կարող եք հրաժարվել ժառանգության ստացումից: Նման դեպքերում ո՛չ դուք եւ ո՛չ էլ ձեր ժառանգները հետագայում ժառանգության ստացման պահանջարկ ներկայացնելու իրավունք չեք ունենա:

Ժառանգության վկայականի ստացումից հետո, գույքի սեփականության իրավունքը հանրային ռեեստրում գրանցումը ապահովում է նոտարը: Այս լրացուցիչ սպասարկման սակագինը չեք վճարում: Վճարում եք միայն հանրային ռեեստրում գրանցման սակագինը:

Ովքե՞ր են համարվում ժառանգորդները:

Առաջին կարգի ժառանգորդներն են՝ հանգուցյալի զավակները, որդեգիրները, կինը (ամուսինը), ծնողները, թոռները, նրանց երեխաները (եթե թոռը մահացած է), որդեգիրները եւ նրանց ազգականները:

Երկրորդ կարգի ժառանգորդներ են համարվում հանգուցյալի քույրերը, եղբայրները, քրոջ եւ եղբոր ժառանգները, վերջիններիս մահվան դեպքում՝ նրանց զավակները:

Երրորդ կարգի ժառանգորդներ են համարվում տատերն ու պապերը, վերջիններիս մահվան դեպքում՝ նրանց ծնողները:

Չորրորդ կարգի ժառանգորդների թվին են պատկանում հանգուցյալի ծնողների քույր-եղբայրները:

Հինգերորդ կարգի ժառանգորդների թվին են պատկանում զարմիկները, վերջիններիս մահվան դեպքում՝ նրանց զավակները:

Ð²ðò – ä²î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Ü°ð

ì²ðì°È²Î°ðä

ԼԱՎ ՔՈՒՆ՝ ԼԱՎ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Վերջին ժամանակների անքննությունը, նկատել եմ անմիջականորեն ազդում է ինչպես տրամադրության, այնպես էլ՝ հիշողության վրա: Տրամադրությունը, հասկանալի է, սակայն քնելն ի՞նչ կապ ունի հիշողության հետ:

Փ.Սիմոնյան

Թբիլիսի

Ամերիկյան հետազոտողները պարզել են, որ քննություններից առաջ անքուն գիշերներ անցկացնելու ուսանողների մեջ տարածված պրակտիկան սխալ է:

Բանն այն է, որ ստացված ցանկացած տեղեկություն յուրացվում եւ տպվում է հիշողության մեջ հենց քնի ժամանակ:

Փաստորեն, քունը պետք է մարդուն ոչ միայն հանգստի, այլեւ՝ ստացած ինֆորմացիան մշակելու համար:

Հետեւաբար, գիտնականները խորհուրդ են տալիս դրանից օգուտ քաղել:

Եթե շատ ինֆորմացիա է կուտակվել, որը ցանկանում եք մտապահել, ուրեմն մի լավ քնեք:

ä²îØ²Î²Ü ÆðàÔàôÂÚàôÜ

«ՆԱՊՈԼԵՈՆԸ»՝ Ի ՊԱՏԻՎ ԲՈՆԱՊԱՐՏԻ

Կյանկանայի իմանալ, որքանո՞վ է «Նապոլեոն» տորթի անվանումը առնչվում ֆրանսիական կայսր Նապոլեոն Բոնապարտին:

Ա.Մարգարյան

Բոլնիսի

Իրոք, «Նապոլեոն» տորթի անվանումն անմիջականորեն առնչվում է ֆրանսիական կայսրին: Ըստ ամենատարածված վարկածի, այդ տորթի բաղադրատոմսը ծնվել է 1912 թվականին, բայց ոչ թե որպես տորթ, այլ որպես կարկանդակ: Այդ ժամանակ Ռուսաստանը նշում էր ֆրանսիացիներից Մոսկվայի ազատագրման 100-ամյա հոբելյանը: Համապատասխան հագուստներ էին կարվում, ցուցափեղկերն էին ձեւավորվում, գրվում էին հայրենասիրական բանաստեղծություններ: Խոհարարները նույնպես հետ չէին մնում «սոցիալական պատվերից»: Ըմպելիքներ, կերակուրներ՝ ամենը հագեցած էր փառապանծ պատմությամբ:

Եվ, ահա, հայտնվեց մի կարկանդակ, որը կազմված էր քաղցր կրեմով պատված ու իրար վրա դարսված խմորի բազմաթիվ բարակ շերտերից: Այն պատրաստվում էր քառակուսաձեւ ու անկյունագծով բաժանվում էր երկու կեսի: Եռանկյունաձեւ էլ վաճառվում էր: Քաղցրավենիքն անվանեցին «Նապոլեոն»:

Իսկ ի՞նչ կապ ուներ Բոնապարտն այս կարկանդակի հետ: Չէ՞ որ եթե անվանումը հաջող չլիներ, այն չէր գոյատեւի: Պարզվում է, որ Լերմոնտովը ռուս ժողովրդի գիտակցության մեջ կայսրի կերպարն ամրագրել էր եռանկյունաձեւ գլխարկով. «Նա եռանկյունաձեւ գլխարկ էր կրում եւ արշավային գորշ սերթուկ»:

Այժմ եռանկյունաձեւ կարկանդակը տորթ է դարձել, սակայն շերտավոր քաղցրավենիքը մեզ համար, միեւնույն է, մնացել է որպես «Նապոլեոն»:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆԸ ՎԵՐՋԻՆ ՉՈՐՍ ՀԱՋԱՐ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ



NASA-ի փորձագետներն ու գիտնականները Ճապոնիայի օդերեւութաբանական ընկերության (JMA) հետ համատեղ պարզել են, որ այս տարվա հուլիսին երկրագնդի ջերմաստիճանը առավելագույն ցուցանիշին է հասել վերջին 4 հազար տարվա ընթացքում, գիտնականների տվյալները ներկայացրել է Washington Post-ը:

Բացի այդ, մասնագետները եկել են այն եզրակացության, որ 2015 թվականի հուլիսը ամենատաք ամիսն է դարձել վերջին ավելի քան 200 տարվա ընթացքում:

Այդ եզրակացությանը մասնագետները հանգել են՝ հիմնվելով մոլորակի ջերմաստիճանի աճի անուղղակի նշանների վրա, ինչպիսիք են, օրինակ, ծառերի տարեկան օղակները, մարջանները: Ինչպես նշում են գիտնականները, այդ ամենը թույլ է տալիս եզրակացնել, որ Երկրագնդի ջերմաստիճանը բարձրացել է:

Գիտնականների տվյալների համաձայն՝ 2015 թվականի հուլիսին ջերմաստիճանն ըստ Ցելսիուսի 0,02 աստիճանով գերազանցել է նախորդ ռեկորդը, որը սահմանվել էր 2011 թվականի հուլիսին: Բացի այդ, նշվում է, որ այս տարվա յուրաքանչյուր ամիս տեղ է զբաղեցրել դիտարկումների ողջ պատմության ընթացքում ամենատաք ամիսների վարկանիշում: Այսպիսով, 2015 թվականն, անկասկած, կդառնա ռեկորդային բարձր ջերմաստիճանի տարի:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐՁԱԿՈՒՐԴԻՑ ՎԵՐԱԴԱՐՁԵՔ ՈՉ ԹԵ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ԱՅԼ՝ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԿԱՄ ՀԻՆԳՇԱԲԹԻ

Նախքան արձակուրդ գնալը, պետք է նախօրոք պլանավորել հանգիստը, որոշակի նախապատրաստական, կազմակերպչական աշխատանքներ իրականացնել: Հոգեբանների խոսքերով, նախապատրաստական աշխատանքները մի կողմից զերծ են պահում սթրեսային հետագա վիճակներից, մյուս կողմից ապահովում են լիարժեք հանգիստը: Կարեւոր է նաեւ նախքան արձակուրդ գնալը, կիսատ գործերն ավարտին հասցնել եւ պլանավորել վերադառնալ աշխատանքի ոչ թե երկուշաբթի օրվանից, այլ՝ չորեքշաբթի կամ հինգշաբթի, քանի որ այս պարագայում աշխատանքային շաբաթը կրճատվում է եւ աշխատանքին ադապտացվելն ավելի հեշտ է լինում:

Ըստ հոգեբանի՝ արձակուրդը կարեւոր նախապայման է առողջության եւ հետագայում արդյունավետ գործունեության համար: Հոգեբանները նաեւ գտնում են, որ հետարձակուրդային դժվարությունները կախված են նաեւ արձակուրդի տեւականությունից ու բովանդակությունից:

Ըստ հոգեբանների, բնական է, երբ որ արձակուրդից վերադառնում են, ադապտացիայի հետ կապված որոշակի դժվարություններ են լինում, քանի որ հանգստի ընթացքում օրգանիզմում փոխվում են կենսաբանական եւ հոգեբանական ռիթմերը, հետեւաբար դժվար է միանգամից անցնել աշխատանքային գործունեությանը: Այս ամենն անհատական է, կան ե'ւ արագ, ե'ւ դանդաղ ադապտացվող մարդիկ: Մարդը արձակուրդից հետո աշխատանքի վերադառնալիս միանգամից պետք է չանցնի գործի, պետք է ծանոթանա աշխատանքային պլանին, ծրագրի իր հետագա անելիքները եւ քիչ-քիչ սկսի ադապտացվել իր աշխատանքին:

Առաջին անգամ հետարձակուրդային համախտանիշի մասին նշել են գերմանացի գիտնականները 20-րդ դարի 80-ական թվականներին՝ հաշվի առնելով այն, որ արձակուրդից վերադառնալուց հետո, աշխատողների մոտ նկատվում է մտավոր կարողությունների ակտիվության նվազում, բացի դրանից նրանք գանգատվում են ախորժակի բացակայությունից, նյարդայնությունից, երբեմն նկատվում է ճնշման տատանում, իսկ գլխավոր գանգատը աշխատելու ցանկության բացակայությունն է:

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀԻՍՏԵՐԻԱ՝ ՀԱՆԳՍՏԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հիստերիան նյարդահոգեբանական հիվանդություն է, որը կարող է դրսեւորվել նույնիսկ այն դեպքում, երբ մարդը լիովին առողջ է: Մեր ժամանակներն այնպիսին են, որ բոլորն էլ բազում խնդիրներ ունեն:

Հիստերիկ նոպան պետք է տարբերել ընկնավորության նոպայից եւ կաթվածի դեպքում առաջացող ուշագնացությունից: Հիստերիայով հիվանդը սովորաբար աստիճանաբար է ընկնում, հարմար տեղում, առանց վնասվելու: Գիտակցությունը պահպանվում է, շնչառությունը չի խանգարվում, սակայն հիվանդն օգնության կարիք ունի: Անհրաժեշտ է օտարներին հեռացնել, նաշատիրի սպիրտ տալ եւ հիվանդի շուրջ հանգստություն պահպանել: Այդպիսի պայմաններում նա արագ կհանգստանա:

Հանգստացնող միջոցներ

Կարմիր ալոճ (боярышник)- 2 ճաշի գդալ չոր պտուղները մանրացնել ու վրան 1,5 բաժակ եռացրած ջուր լցնել: Երեք անգամից ընդունել՝ ուտելուց 30 րոպե առաջ: Օգտագործել նյարդային համակարգի գրգռվածության ժամանակ:

Կատվախոտ - 1 ճաշի գդալ չոր մանրացրած արմատներին ավելացնել 1 բաժակ եռջուր, լցնել թերմոսի մեջ եւ գիշերը թողնել: Ընդունել 1-ական ճաշի գդալ, օրը 3-4 անգամ: Չափից ավելի գրգռվածության դեպքում թուրմն ընդունել 3 անգամ, յուրաքանչյուր անգամ խմելով մեկ երրորդ բաժակ: Կատվախոտը 2 ամսից ավելի չի կարելի ընդունել, կարող են գլխացավեր առաջանալ:

Առյուծագի (пустырник) - 15 գրամ խոտի վրա լցնել 1 բաժակ եռացրած ջուր: Ընդունել 1-ական ճաշի գդալ, օրը 3-4 անգամ:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

Մայրը միշտ մայր է, որդիք են տարբեր:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ
(1924-1971)
Հայ գրող

Ո'վ սեր, ո՞վ կա, որ քո ուժին չստրկանա, որ քո առաջ տարիքի նման չմատուցի սրտի գահը, իբրեւ հառաչ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՎԾԱՎԱՉԵ
(1786-1846)
Վրաց բանաստեղծ

Մտածողությունը մեծ արժանիք է, եւ իմաստությունը նրանում է, որպեսզի ասվի ճշմարտությունը եւ, որպեսզի ունկնդրելով բնությանը՝ նրա հետ վարվեն համապատասխան ձեւով:

ՀԻՊՈԿՐԱՏ
(մ.թ.ա. 460-մ.թ.ա. 356)
Հնադարյան հույն բժիշկ

... Պարզությունը խոսքի գլխավոր արժանիքն է:

ԱՐԻՍՏՈՏԵԼ
(մ.թ.ա.384-մ.թ.ա.322)
Հռոմեացի փիլիսոփա

Ինչ չի սերմանել գարունը, այն չի աճեցնի ամառը, չի հնձի աշունը եւ չի ճաշակի ձմեռը:

Յոհան Հերդեր
(1744-1803)
Գերմանացի փիլիսոփա

Մեր գիտակցությունը ձուլվել է գործունեության ձեւով:

Անրի Բերգսոն
(1859-1941)
Ֆրանսիացի փիլիսոփա

Տղեք ջա՜ն, եթե ընտանիքում ձեւավորվում է կոնֆլիկտային իրավիճակ, միանգամից ինքներդ ձեզ հարց տվեք. ուզում եք լինել ճի՞շտ, թե՞ երջանիկ:

Վ.Բ.
«Վրաստանի» ընթերցող

²Ü°Î¸àÎÜ°ð

** Բժշկական եզրակացությունից.*

«Դիահերձումը ցույց տվեց, որ մահը վրա է հասել դիահերձման արդյունքում»:

** Հիվանդի կինը դիմում է բուժող բժշկին.*

- Դե, իհարկե, բժի'շկ, ես ամենեւին չեմ պատրաստվում ամուսնուս հուզվելու առիթ տալ: Ես շատ զգույշ կլինեմ: Ես միայն կխնդրեմ նրան, որ իր կտակը գրի:

** Բժիշկը բացատրում է տարեց հիվանդին.*

- Դուք աստիճանաբար կորցնում եք լսողությունը եւ այդ ընթացքը դանդաղեցնելու համար դուք պետք է դադարեցնեք օխելը, ոգելից խմիչքներ օգտագործելը եւ կանանց հետ կապեր հաստատելը:

Ծերունին մտածում է ու պատասխանում.

- Եվ այդ ամենը միայն այն բանի համար, որ լսողությունը մի քիչ լավանա:

** Հոգեբույժը դուրս է գրում հիվանդին.*

- Ես սրտանց շնորհավորում եմ ձեզ: Այսպիսի առաջընթաց՝ այսքան կարճ ժամանակում:

- Բժի'շկ, կես տարի առաջ ես Նապոլեոնն էի, իսկ հիմա՝ ոչ ոք... Եվ դա դուք առաջընթա՞ց եք համարում:

** Բժիշկը զննում է հիվանդին: Հիվանդը հարցնում է.*

- Բժի'շկ, ես ուզում եմ ճշմարտությունն իմանալ: Խոստանում եմ ուժեղ լինել... Ուղղակի ասեք. ես շուտով աշխատանքի՞ պետք է գնամ:

** - Սիրելի'ս, չգիտե՞ս, թե որ դարակում է՝ «Ինչպես ապրել 100 տարի» գիրքը:*

- Ես այն այրել եմ: Քո մայրն էր ուզում դա կարդալ:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԱՐՑԱԽԸ ՆՇԵՑ ԼՂՀ-Ի ՀՌՉԱԿՄԱՆ 24-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Ընթացիկ տարվա սեպտեմբերի մեկին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նշեց անկախության հռչակման 24-րդ տարեդարձը:

Աշխատանքային այցով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գտնվող Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը Ստեփանակերտում տիկին Ռիտա Սարգսյանի հետ ներկա գտնվեց Վերածննդի հրապարակում՝ ի հիշատակ Հայոց ցեղասպանության զոհերի եւ հայկական երկու պետությունների անկախության համար իրենց կյանքը նվիրաբերած սուրբ նահատակների կայացած՝ Ջուզեպպե Վերդիի «Ռեքվիեմ» ստեղծագործության արցախյան պրեմիերային:

Սերժ Սարգսյանը ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի, Արցախի Հանրապետության հռչակման 24-րդ տարեդարձին մասնակցելու նպատակով Հայաստանից ժամանած պաշտոնական պատվիրակության, արցախահայության եւ արտերկրից ժամանած հյուրերի հետ Վերածննդի հրապարակից հանդիսավոր քայլերթով այցելել է Ստեփանակերտի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու Արցախի անկախության համար զոհված հայորդիների հիշատակին, ծաղիկներ դրել ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նախագահ Արթուր Մկրտչյանի եւ արցախյան ազատամարտի նահատակների շիրիմներին:

Տոնական միջոցառումների շրջանակներում Սերժ Սարգսյանը, ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի հետ միասին, ներկա է գտնվել նաեւ Հայաստանի ագրարային համալսարանի Շուշիի մասնաճյուղի նորակառույց համալիրի բացմանը:

Ստեփանակերտում Սերժ Սարգսյանը եւ Բակո Սահակյանը մասնակցել են ԹՈՒՄՈxՀԲԸՄ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի բացմանը:

ՃԱԽՍԱԾ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳԻՆԸ ԿՆՎԱԶԻ

Օգոստոսի 31-ին կայացած Հայաստանի կառավարության նիստում վարչապետ Հովիկ Աբրահամյանը հայտարարեց. «Առաջին եռամսյակում, ըստ ճշգրտված տվյալների, ունեցել ենք ՀՆԱ-ի 2,5 տոկոս, իսկ երկրորդ եռամսյակում՝ 5,1 տոկոս տնտեսական աճ, արդյունքում ունենք շուրջ 4 տոկոս կիսամյակային տնտեսական աճ: Հանձնարարում եմ տնտեսության ոլորտի բոլոր գերատեսչություններին՝ հանրությանը մանրամասն ներկայացնել կիսամյակի տնտեսական արդյունքները»:

Նիստում որոշում է ընդունվել 2015թ. օգոստոսի 1-ից մինչեւ էներգետիկայի բնագավառում կարգավորման խորհրդատվական ծառայության արդյունքների ստացումը, սպառած էլեկտրական էներգիայի մասով՝ ս.թ. օգոստոսի 1-ից գործող սակագները մեղմացնելու համար բնակչության (ամսական սպառված ամբողջ էլեկտրաէներգիայի մասով) եւ 0,38 կՎ լարմամբ՝ ամսական մինչեւ 500 կՎտժ էլեկտրական էներգիայի սպառում ունեցող այլ սպառողների (ամսական մինչեւ 250 կՎտժ էլեկտրական էներգիայի սպառման մասով) օգտին վճարել սուբսիդիաներ 6,93 դրամ/կՎտժ չափով: Հովիկ Աբրահամյանը նշել է. «Հանրապետության նախագահի հետ այսօր առավոտյան քննարկել ենք նաեւ փոքր եւ միջին ձեռնարկատերերին աջակցելու հարցը եւ որոշում ենք կայացրել կառավարություն ներկայացնել այս նախագիծը, որով փորձում ենք լուծել նաեւ ՓՄՁ-ների հարցը»: Վարչապետի խոսքով՝ հոսանքի դիմաց նրանց ծախսած 6,93 դրամ հավելավճարը կփոխատուցի կառավարությունը՝ մինչեւ խորհրդատվության ավարտը:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵՑ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

40 ՀԱԶԱՐ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐ ԵՎ 10 ՀԱԶԱՐ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐ

Գիտելիքի, գրքի եւ դպրության օրը՝ սեպտեմբերի 1-ը, յուրահատուկ իրադարձություն է: Տոն, որին անհամբերությամբ սպասում են շատերը:

Սեպտեմբերի 1-ին Հայաստանում 40 հազարից ավելի փոքրիկներ առաջին անգամ ոտք դրեցին դպրոց: Նախորդ տարի առաջին դասարանցիների թիվը 38 հազար է եղել:

«Այս օրը հիշարժան է բոլոր աշակերտների, մասնավորապես, առաջին դասարանցիների համար, ովքեր իրենց ուսուցիչների ուղեկցությամբ առաջին անգամ կմտնեն դպրոց՝ զարմանահրաշ մի աշխարհ, որը տարիների ընթացքում կդառնա նրանց համար անչափ հոգեհարազատ, սիրելի ու անմոռանալի մի վայր, որն ամբողջ կյանքում կոչելու են «իմ դպրոցը»,- շնորհավորելով դպրոցականներին՝ նշեց Հայաստանի կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը:

Օրը պակաս տոնական չէ նաեւ այն պատանիների եւ երիտասարդների համար, ովքեր առաջին անգամ բացեցին բուհերի դռները: Հայաստանի ավելի քան 10 հազար երիտասարդներ սեպտեմբերի 1-ին առաջին անգամ ոտք դրեցին բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Սեպտեմբերի 1-ի առթիվ Հայաստանում ավանդաբար անցկացվեցին տարատեսակ միջոցառումներ եւ իրադարձություններ: Միջոցառումների նպատակն էր նոր ուսումնական տարվա սկիզբը տոն դարձնել բոլորի համար եւ ուսման նկատմամբ առաջացնել հետաքրքրություն:

ԱՆՑԿԱՑՎԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

«Շանթ-2015» ռազմավարական հրամանատարաշտաբային զորավարժությունների շրջանակում Հայաստանի նախագահ, Հայաստանի ազգային անվտանգության խորհրդի նախագահ Սերժ Սարգսյանը սեպտեմբերի 3-ի երեկոյան հրավիրեց ՀՀ ազգային անվտանգության խորհրդի պայմանական նիստ՝ տեղեկացնելու վերջին օրերին Հայաստանի շուրջ, ըստ զորավարժությունների սցենարի, ծավալվող իրավիճակի մասին:

Նիստում լսվեց ազգային անվտանգության խորհրդի անդամների՝ խաղարկային իրավիճակից բխող զեկույցները եւ առաջարկությունները: Զորավարժությունների սցենարից բխող հանձնարարականներ տրվեցին համապատասխան պետական մարմիններին:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱԶԱՏ ԴԱՇԻՆՔԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ

Արցախի ժողովրդավարական կուսակցության հրավերով այս օրերին Ստեփանակերտում են Եվրոպական ազատ դաշինքի նախագահ Ֆրանսուա Ալֆոնսին եւ Եվրախորհրդարանի, ԵԱԴ անդամ Ջորդի Սեբաստիան: Այցի շրջանակներում ԵԱԴ պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ ԼՂՀ իշխանության եւ հասարակական կառույցների ներկայացուցիչների հետ, մասնակցեց Արցախի անկախության տոնին նվիրված միջոցառումներին:

ԼԵՎՈՆ ԱՐՈՆՅԱՆԸ ԿՄԱՍՆԱԿՑԻ ԲԱՔՎՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՇԱՐԻՆ

ԱՄՆ-ի Սենթ Լուիսի սուպերմրցաշարի հաղթող Լեւոն Արոնյանը մեկնաբանել է առաջիկայում Բաքվում կայանալիք շախմատի Աշխարհի գավաթին իր մասնակցությունը: «Մեկ շաբաթից մեկնում եմ Բաքու, իսկ Աշխարհի գավաթից հետո կխաղամ արագ շախմատի Աշխարհի առաջնությունում, որը տեղի կունենա Բեռլինում: Երաժիշտները, արվեստի տարբեր ճյուղերի ներկայացուցիչները գալիս են Ադրբեջան, մարդիկ, ովքեր բերում են խաղաղություն, եւ ես պատրաստվում եմ հետեւել նրանց օրինակին: Կփորձեմ ցույց տալ, որ ես հարգում եմ հարեւան երկրին, գործի դնել շախմատում իմ լավագույն կարողությունները եւ հաճույք պատճառել տեղի երկրպագուներին»,- հայտարարեց հայազգի գրոսմայստերը:

ՎԱԽՃԱՆՎԵԼ Է ԳԵՆԵՐԱԼ-ԳՆԴԱՊԵՏ ԳՈՒՐԳԵՆ ԴԱԼԻԲԱԼԹԱՅԱՆԸ

Նշանավոր պետական եւ ռազմական գործիչ, Հայաստանի զինված ուժերի կայացման առաջամարտիկ, գեներալ-գնդապետ Գուրգեն Դալիբալթայանը 2015թ. սեպտեմբերի 1-ին կնքել է իր մահկանացուն:

Գուրգեն Հարությունի Դալիբալթայանը ծնվել է 1926թ. հունիսի 5-ին Վրաստանում՝ Բոգդանովկայի (այժմ՝ Նինոծմինդա) շրջանի Մեծ Արագյալ գյուղում: 1934-44թթ. սովորել է Գորելովկայի միջնակարգ դպրոցում: 1947-ին ավարտել է Թբիլիսիի հետեւակային ուսումնարանը: 1958-61թթ. սովորել է Մոսկվայի Մ.Ֆրունզեի անվան զինվորական համազորային ակադեմիայում: 1947-1991թթ. ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերում: Զբաղեցրել է մի շարք հրամանատարական պաշտոններ:

Հայաստանի համար բախտորոշ ժամանակաշրջանում՝ 1991թ.-ին, Գուրգեն Դալիբալթայանը հայրենիքի կանչով եկել է Հայաստան եւ զինվորագրվել է Հայաստանի Հանրապետության ազգային բանակի կազմավորման բարդ ու դժվարին գործին:

1991-1992թթ. զբաղեցրել է Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ-ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալի, 1992թ. օգոստոսից մինչեւ 1993թ. սեպտեմբեր՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալի պաշտոնները: 1992թ. ՀՀ նախագահի հրամանագրով Գուրգեն Դալիբալթայանին շնորհվել է գեներալ-լեյտենանտի, իսկ 1996թ.-ին՝ գեներալ-գնդապետի զինվորական կոչում: 1993-2006թթ. զբաղեցրել է ՀՀ նախագահի գլխավոր խորհրդականի, իսկ 2000-2006թթ.՝ Գլխավոր ռազմական տեսուչի պաշտոնները:

Հայրենիքը բարձր է գնահատել նրա ծառայությունները: Նրա զինվորական վաստակի գնահատականն են այն բազմաթիվ պետական եւ գերատեսչական պարգեւները, որոնց արժանացել է գեներալ-գնդապետ Գուրգեն Դալիբալթայանը: 2001թ.-ից Ախալքալաքիի շրջանի Ագանայի միջնակարգ դպրոցը կոչվում է Գուրգեն Դալիբալթայանի անունով:

Կյանքի վերջին տարիներին էլ Գուրգեն Դալիբալթայանը շարունակում էր իր հարուստ փորձը ներդնել զինված ուժերի հետագա զարգացմանը: Նա իրեն ճանաչողների եւ զինակից ընկերների հիշողության մեջ կմնա որպես հայրենիքի իսկական նվիրյալ զինվոր, համեստ ու պարկեշտ մարդ եւ քաղաքացի: Կանգնած լինելով հայոց բանակի կազմավորման ակունքներում՝ Գուրգեն Դալիբալթայանը միշտ կհիշվի որպես հայրենիքի անկախության պաշտպանի եւ բանակի կայացման առաջամարտիկներից մեկը:

Գեներալ-գնդապետ Գուրգեն Դալիբալթայանը սերտ կապեր էր պահպանում իր ծննդավայրի՝ Վրաստանի հետ: Նա պարբերաբար մասնակցում էր Նինոծմինդայի շրջանի Գանձա գյուղում անցկացվող Տերյանական պոեզիայի օրվա, Ախալքալաքիի շրջանի Կարծախ գյուղում՝ Ջիվանու ավանդական տոնակարատություններին, վիրահայ համայնքի կողմից կազմակերպվող մյուս միջոցառումներին:

«Վրաստան» թերթը խորապես վշտակցում է ախալքալաքցիներ Վլադիմիր Ալելիշվիլուն եւ Էդուարդ Աղասարյանին՝ քեռու եւ պապի՝ Գուրգեն Դալիբալթայանի մահվան կապակցությամբ եւ ցավակցություն հայտնում հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին

ՍԵՊՏԵՄԲԵՐ

05.09.2015. Նիկիայի Սուրբ ժողովի 318 Հայրապետների հիշատակության օր

Քրիստոսի Եկեղեցու պատմության մեջ առաջին Տիեզերական ժողովը տեղի է ունեցել 325 թվականին, Կոստանդիանոս Մեծ կայսեր հրամանով, Կ.Պոլսի մոտ գտնվող Նիկիա քաղաքում: Ժողովին մասնակցում էին Ընդհանրական Եկեղեցու 318 նշանավոր հայրապետները: Նիկիայի Ա Տիեզերաժողովին մասնակցում էր նաեւ Սբ. Գրիգոր Լուսավորչի որդին՝ Արիստակեսը: Ժողովի ընդունած դավանաբանական բանաձեւը, որը հայտնի է Նիկիական հանգանակ անունով, Սբ. Արիստակես Հայրապետը Հայաստան է բերել, ներկայացրել հորը՝ Սբ. Գրիգոր Լուսավորչին: Վերջինս էլ դրան ավելացրել է «Իսկ մեք փառաւորեսցուք... » հատվածը: Նիկիայում ընդունված Հավատո հանգանակն ու Լուսավորչի ավելացրած հատվածը մինչեւ այսօր էլ անփոփոխ օգտագործում են Հայ Եկեղեցու ծիսակարգում: Արիստակեսն իր հետ Հայաստան էր բերել նաեւ Նիկիայի ժողովում ընդունած 20 կանոնները, որոնք նույնպես հաստատվել են Սբ. Գրիգոր Լուսավորչի կողմից:

06.09.2015. Բարեկենդան Սուրբ Խաչի պահոց

Բարեկենդանը պահքին նախորդող կիրակին է, որը նվիրված է տաղավար տոներից մեկին՝ Խաչվերացին եւ տեւում է երկուշաբթիից մինչեւ շաբաթ:

13.09.2015. Խաչվերաց

Խաչվերացը Հայ Եկեղեցու հինգ տաղավար տոներից վերջինն է: Այն Խաչին նվիրված տոներից ամենակարեւորն է, որովհետեւ նվիրված է գերությունից խաչի վերադարձի եւ փառաբանության հիշատակին: Հայաստանյայց Եկեղեցում Խաչվերացը տոնում են սեպտեմբերի 11-17-ն ընկած ժամանակահատվածում հանդիպող կիրակի օրը:

Ընդհանուր առմամբ՝ Խաչվերացը կամ «Սըրբխեչը» աշնան սկիզբը խորհրդանշող ուրախ տոն է: Շատ տեղեր Խաչվերացը՝ «Սըրբխեչը», ընկալում են որպես աշնանամուտ:

Խաչվերացի հաջորդ օրը մեռելոց է: Այդ օրը եկեղեցիներում մատուցվում է Սբ. Պատարագ, կատարվում է հոգեհանգստյան կարգ, որից հետո այցելում են հանգուցյալների շիրիմներին:

ՍԱՀՄԱՆԱԳԻՇ

ԱՎՏՈԿՈՒՏԱԿՈՒՄՆԵՐ ՎՐԱՑ-ՌՈՒՍԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԾՈՒՄ

Վրաստանի ՆԳ նախարարությունը հաստատել է այն տեղեկատվությունը, ըստ որի՝ վրաց-ռուսական «Ղազբեգի-Վերին Լարս» մաքսային անցակետում կուտակվել են բավական թվով բեռնատար մեքենաներ: Նշենք, որ վերոնշյալ մաքսային անցակետը, ներկա դրությամբ, միակ գործող պաշտոնական անցակետն է Վրաստանի եւ Ռուսաստանի ցամաքային սահմանագծում:

Ինչպես նշեցին ՆԳ նախարարության հասարակության հետ կապի դեպարտամենտում, վրացական կողմից հիմնախնդիրներ չեն ծագել: Բեռնատարները չեն հասցնում անցնել ռուսական սահմանագիծը: Ինչ վերաբերում է ուղեւորատար մեքենաներին, ապա, դրանց շարժումը իրականացվում է սովորական պայմանակարգով:

Միջազգային բեռնափոխադրումների ասոցիացիայի նախագահ Հերբերտ Համբարձումյանը, մեկնաբանելով մեքենաների կուտակումների մասին տեղեկատվությունը, նշեց, որ Վերին Լարսում հայկական բեռնատարների կուտակումներն արդեն երկու տարի սովորական երեւույթ են դարձել: Մեքենաների կուտակման հիմնական պատճառը Թուրքիայից ավտոմեքենաների հոսքի ավելացումն է, ինչի հետեւանքով հերթեր են առաջանում:

Նրա խոսքերով՝ խնդրով հետաքրքրվել են Հայաստանի իշխանությունները: «Մեր վարչապետը Ռուսաստանի իր գործընկերոջն առաջարկել է Վերին Լարս անցակետում ավելացնել աշխատակիցների քանակը կամ առանձին պատուհան բացել Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների բեռնափոխադրողներին սպասարկելու համար»,- ասել է Հերբերտ Համբարձումյանը:

Ստացված տեղեկատվությամբ, Ռուսաստանն սկզբունքորեն ընդունել է Վերին Լարս անցակետում հայկական բեռնատարների կուտակումների խնդրի կարգավորման հայկական կողմի առաջարկները:

ՏԱՐԵՐՔԻՑ ՀԵՏՈ

ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻՆ ԿԲԱՑՎԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ

Ինչպես հայտարարեց Թբիլիսիի կենդանաբանական այգու տնօրեն Զուրաբ Գուրիելիձեն, կենդանաբանական այգու մի մասն արդեն վերականգնվել է, եւ այն կբացվի սեպտեմբերի 13-ին:

Տնօրենի խոսքերով, կենդանաբանական այգին կազմված էր երեք յարուսներից, որի ամենաստորին հատվածը ջրհեղեղի արդյունքում լրիվությամբ ոչնչացվել է: Անդրադառնալով նոր կենդանաբանական այգու շինարարության թեմային, Զուրաբ Գուրիելիձեն նշեց, որ նոր այգու տարածքի շրջափակման համար քաղաքապետարանը հատկացրել է 2 միլիոն լարի, իսկ ինչ վերաբերում է անմիջականորեն կենդանաբանական այգու շինարարությանը, ապա այն չի սկսվել: «Ներկա դրությամբ, չի հաստատվել նաեւ նոր կենդանաբանական այգու նախագիծը: Ներկայումս ակտիվ աշխատանք է տարվում դոնոր միջազգային կազմակերպությունների եւ Վրաստանի կառավարության հետ համապատասխան ֆինանսների ապահովման ուղղությամբ»,- հայտարարեց Գուրիելիձեն եւ հավելեց, որ, ենթադրաբար, նոր կառույցի համար կպահանջվի 50-60 միլիոն եվրո:

ՖՈՒՏԲՈԼ

ԱՌԱՋԸՆԹԱՑ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակել է ազգային հավաքականների վարկանիշային հերթական աղյուսակը:

Նոր սանդղակում, թե՛ Վրաստանի եւ թե՛ Հայաստանի հավաքականները նկատելի առաջընթաց են գրանցել: Վրաստանի թիմը, իր դիրքերը բարելավելով 7 հորիզոնականով, ներկայումս զբաղեցնում է 147-րդ տեղը: Հայաստանի հավաքականը, 5 հորիզոնականի առաջադիմությամբ, հանգրվանել է 83-րդ հորիզոնականում:

Ազգային հավաքականների լավագույն եռյակն անփոփոխ է՝ Արգենտինա, Բելգիա, Գերմանիա: Լավագույնների շարքում են նաեւ Կոլումբիան, Բրազիլիան, Ռումինիան, Չիլին, Ուելսը եւ Անգլիան:

Ռուսաստանը զբաղեցրել է 32-րդ տեղը, Ադրբեջանը 110-րդն է:

Նշենք, որ երեկ, սեպտեմբերի 4-ին Վրաստանի եւ Հայաստանի հավաքականները, Եվրոպայի 2016 թվականի առաջնության ընտրական մրցաշարի շրջանակներում, անցկացրին հերթական հանդիպումները: Վրաստանի հավաքականը հյուրընկալեց Շոտլանդիայի հավաքականին, իսկ Հայաստանի ազգային ընտրանին մրցակցի դաշտում ուժերը չափեց Սերբիայի հավաքականի հետ:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՈՒՄ ԵՆՔ, ԱՆԺԵԼԱ ԵՎ ՊԱԱՏԱ

Վրաց աշխարհահռչակ օպերային երգիչ Պաատա Բուրճուլաձեն ամուսնացել է: Նա քաղաքացիական 12-ամյա ամուսնությունից հետո անցյալ շաբաթ պաշտոնապես ձեւակերպեց իր հարաբերությունները Անժելա Վասիլենկոյի հետ: Նշենք, որ զույգը եկեղեցական պսակադրության արարողությունն անցկացրել էր տասը տարի առաջ, եւ այժմ ամուսնությունը ձեւակերպվեց իրավաբանորեն:

Արարողությունը անցկացվեց Թբիլիսիում, Քուռ գետի լաստանավի վրա:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Վրացական հեռուստաալիք: 9.Մեկմեկու: 10.Ռուսական ցար՝ Իվան IV ...: 11.Անպատվում: 13.Բորակաթթվային աղերի ընդհանուր անվանումը: 16.Գետ Աֆրիկայի հյուսիս-արեւմուտքում: 17.Արու ուղտ: 19.Ջրի գնալը: 22.ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի էդիտա ...: 24.Հայ դերասանուհի, Հայաստանի վաստակավոր արտիստ ... Գրիգորյան: 25.Գոյություն ունեցող, ներկա: 27.Գերմանացի նկարիչ ու գրաֆիկ Ալբրեխտ ...: 29.Չորս անգամ: 32.Անապատ Չիլիում: 33.Վախ: 35.Հոգս: 37.Գրական ստեղծագործություն: 39.Ալ.Դյումա «... թագուհին»: 40.Ոչխարի բրդոտ մորթի: 43.Գյուղ (ժող.): 44.Գրքի, տետրի շապիկ: 47.Վրաստանի կրթության եւ գիտության նախարարի տեղակալ ... Գիգաուրի: 49.Մոլդովայի մայրաքաղաքը: 50.Վռազ: 53.Հասկանալի, ըմբռնելի: 54.Կինոդերասան ... Մերֆի: 55.Հարգական մակդիր, որ գործածում են ազգակցություն ցույց տվող բառերի հետ: 57.Շիջած, հանգած: 58.Ընդհանրական եկեղեցու հայր, Հայոց եւ ընդհանրական եկեղեցիների սուրբ ... Երուսաղեմցի (IV դար):

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Բռնցքամարտի մրցամաս: 2.Աստղածաղիկ: 3.Ադոլֆ Հիտլերի պաշտոնական կինը՝ Եվա ...: 4.Ճյուղերից հյուսած ու ցեխով ծեփած պատ: 5.Մարգագետին: 6.Ստորակարգ կորիզավոր (էուկարիոտ) օրգանիզմների առանձին թագավորության ներկայացուցիչ: 8.Գայլերի խումբ: 12.Հնագույն հայկական ցեղ: 14.Ոլորապտույտ: 15.Քաղաք Եմենում: 18.Սանրվածք: 19.Բոյ, տարիք: 20.Գեղեցիկ պոչով փքուն թռչուն: 21.Լյարդի մաղձը: 23.Վառվող փայտերի կույտ: 26.Պռունկ (ժող.): 28.«Ըստ օրենքի/իրավունքի» դե ...: 29.Ըստ աստվածաշնչի, Նոյի կրտսեր որդին: 30.Ուկրաինայի խորհրդարանը: 31.Ամուսնացնել, պսակել: 34.Ճգնաժամ: 36.Մարմնի մեջ ցրտի զգացում, սարսուռ: 38.Ուղեւորություն, ճանապարհորդություն: 41.Ձայնի ալիքավորում, թրթռացում: 42.Ոտնաման: 45.Անտառակաքավ, դահուճ: 46.Մառախուղ, մեգ: 48.Սուր: 51.Արվեստի ձեւ, որն արտահայտվում է մարմնի ռիթմիկ շարժումներով: 52.Առասան, պարան: 56.Լատինական այբուբենի տառ:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 6.Թմրամոլ: 9.Վահան: 10.Անբիծ: 11.Աչքածակ: 12.Պատում: 14.Քնքուշ: 16.Մոտորանավակ: 18.Ատ: 20.Հիմար: 21.Ռաֆֆի: 25.Տոկուն: 26.Ինքնիշխան: 27.Եղան: 28.Մանիլա: 29.Դիվանագետ: 31.Շերամ: 32.Մարաշ. 34.Երակ: 38.Տարտու: 40.Հայտնաբերել: 42.Մառան: 43.Ղազար: 44.Նարիման: 45.Թամար: 46.Նազիկ: 47.Մարաթուկ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ամաչկոտ: 2.Սամարա: 3.Սովամահ: 4.Նավավար: 5.Սամում: 7.Տնանկ: 8.Նիկուլին: 13.Մորֆի: 14.Քանոն: 15.Աչագեղ: 17.Դամալա: 19.Տասնմեկ: 20.Հուզառատ: 22.Ինտիմ: 23.Անտաշ: 24.Իշխան: 25.Տաշեմ: 29.Դարան: 30.Տաշեղ: 31.Շարական: 33.Շառավիղ: 34.Եզ: 35.Ետնամաս: 36.Բարիկադ: 37.Բելառուս: 39.Տու: 40.Հարավ: 41.Լավաշ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445